17 FEB 2010

1 № ՍՈՑԱՊԺՈՂԿՈՄԱՏ № 1
Հաշմ. Կոոպ. Միություն

336.6
Հ-11

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

## Ա Ր Տ Ե Լ Ն Ե Ր Ի

Յերեվան — 1928

№ 1 ԾՈՑԱՊԺՈՂԿՈՄԱՏ № 1

Հայ. Համ. Կոոպ. Միություն

6.6
Ӡ-11

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

## ԱՐՏԵԼՆԵՐԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
անվան
Публичная Библиотека

Երևան — 1928

18.02.2014

28089/1

Գրառեպվար № 785-գ Տիրաժ 1000

Պետհրատի 2-դ տպարան Յերևանում—657

**Հաստատված ՀԽՍՀ Ժողկոմխորհի 1928 թ. մարտի 7-ին**

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՐՏԵԼՆԵՐԻ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ.

1. Հաշմանդամների աշխատանքը նպատակահարմար և արդյունավետ կերպով օգտագործելու, ինչպես նաև նրանց նյութական դրությունը բարելավելու և կուլտ-կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով, «Հաշմանդամների Արտադրողական Սպառողական Միության» կանոնադրության հիման վրա (հաստատված ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1924 թ. դեկտեմբերի 8-ի վորոշմամբ) հիմնվում է ........................................ հաշմանդամների կոոպերատիվ արտել «........................................» անունով, վորի վարչությունը գտնվում է ........................................:

Արտելի գործունեությունը տարածվում է ........................................ վրա:

2. Առաջին հոդվածում հիշած նպատակներն իրագործելու համար արտելին իրավունք է տրվում.—

ա) ձեռք բերելու, ոտարելու, գրավ դնելու և ընդունելու ու կապալով տալու, վերցնելու զանազան

տեսակի գույք, վորոնց թվում նաև շինությունները։

բ) կազմակերպելու արդյունաբերական արտադրական ձեռնարկություններ, արտադրելու ամեն տեսակ իրեր, ինչպես նաև տնայնա-արհեստագործական և գործարանային արդյունաբերության ապրանքներ.

գ) կատարելու հում նյութերի, մթերքների, գործիքների և սարքի գնումներ, բանալու հաշմանդամների, նույնպես և վոչ հաշմանդամների արտադրած իրերի մթերման ու վաճառման պահեստներ, նաև առևտուր անելու փակ շենքերում, արկղներով, թաքախներով, կողովներով, ամաններով և այլն։ Առևտրական արտելներին չի թույլատրվում վոչ հաշմանդամների արտադրած իրերի ու առարկաների մեծաքանակ վաճառք կամ արտահանում կատարել։ Արտադրական արտելներին, վորոնք ունեն իրենց խանութները կամ ճյուղերը, թույլատրվում է տվյալ արտադրության չվերաբերվող կամ նրա արտադրածի համատեսակ ապրանքների մեծաքանակ վաճառք կատարել, թեկուզ դրանք հաշմանդամային արտելների արտադրությունը չլինեն.

դ) կատարելու կոմիսիոն գործառնություններ, ընդունելու հիմնարկություններից և անձերից պատվերներ, կապալներ, մատակարարումներ, մասնակցելու պետական և այլ կազմակերպությունների ու հիմնարկների կողմից նշանակված աճուրդներին.

ե) կազմակերպելու իր անդամների համար աշխատանք նրանց բնակարաններում, ինչպես նաև պատվիրատուների շենքերում.

զ) զբաղվելու յեն ձգած իրերի, ջարդի, (մետաղ), հնոտիների, խոտանքի (брак) և ոգտագործելի այլ



իրերի ու նյութերի հավաքմամբ և վերամշակությամբ.

ը) դրամագլուխներ կազմելու և փոխառություններ կնքելու.

թ) իր աշխատանքով զանազան անձնական ծառայություններ մատուցելու հիմնարկություններին և անձանց.

ժ) մասնակցելու փոխադարձ ոգնության դրամարկղներին, ինչպես նաև ցույց տալու հաշմանդամային արտելի անդամներին այլ ձևի ոգնություն (փոխառություններ ու նպաստներ տալով, ճաշարաններ, հանրակացարաններ կազմակերպելով և այլն).

ի) վարկավորելու, վարկավորվելու, տալու, ընդունել և զեղչելու որինական ամեն տեսակ պարտավորություններ, ինչպես նաև մուրհակներ.

լ) կատարելու իր անդամների մեջ կուլտ-կրթական աշխատանքներ, կազմակերպելով անգրագիտությունը վերացնելու դասընթացքներ, ակումբներ, գրադարաններ, ընթերցարաններ, դասախոսություններ և այլն։

խ) կատարել ու գործող որենքներով և «Հաշմանդամային Արտադրողական-Սպառողական Միության» կանոնադրությամբ թույլատրված այլ գործողություններ, վորոնք անհրաժեշտ են արտելի վրա դրված նպատակներն իրագործելու համար։

3. Իր հանձն առած պարտավորությունների հանդեպ, ինչպես և արտելի կողմից ուրիշ ձեռնարկությունների և անձանց հասցրած վնասների համար արտելը պատասխանատու յե իր ամբողջ գույքով։

4. Այս կանոնադրությունը սոցիալական ապահովության գավառային կամ կենտրոնական վերա-

դաս մարմինների կողմից հաստատվելու և տոմարագրվելու օրից սկսած արտելը վայելում է իրավաբանական անձի բոլոր իրավունքները։ Վերոհիշյալ մարմինների կողմից կանոնադրությունը հաստատվելու և տոմարագրվելու մասին տեղեկություն ստանալուց հետո 3 ամիս ժամանակամիջոցում արտելը պարտավոր է իրազեկ դարձնելու սոցիալական ապահովության տեղական վերադաս մարմնին իր գործունեությունն սկսելու մասին։ Յեթե այդ ժամանակամիջոցում արտելը չսկսեց իր գործունեությունը, նա հանվում է ցուցակից (մատյանից)։

5) Այս կանոնադրությամբ չնախատեսնված բոլոր դեպքերում արտելը ղեկավարվում է գոյություն ունեցող օրենքներով, այլ և Սոցապժողկոմատի և նրան կից Հաշմանդամային Արտադրողական Սպառողական Միության հրահանգներով։

## 2. ԱՐՏԵԼԻ ԿԱԶՄԸ, ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Արտելի անդամ կարող է լինել 18 տարին լրացրած և ընտրողական իրավունքներից չզրկված ներքոհիշյալ անձինք, վորոնք սոցիալական ապահովության կամ սոցիալական ապահովագրության կարգով իրավունք ունեն սոցիալական ապահովություն ստանալու. 1) հաշմանդամության բոլոր կարգերին պատկանող զինվորական և աշխատանքի հաշմանդամները, 2) հակահեղափոխության դեմ մղած պայքարին ակտիվ մասնակցելու հետևանքով աշխատունակությունը կորցրած, 3) մեռած կամ անհայտ բացակայող զինվորական ծառայողների ընտանիքների անդամները, ինչպես և



հակահեղափոխության դեմ մղած պայքարում մեռած կամ ընկած անձանց ընտանիքների անդամները, 4) մեռած ապահովագրվածների, մեռած զինվորական և աշխատանքի հաշմանդամների ընտանիքների ամդամները, ինչպես և այս հոդ. 2-րդ կետում մատնանշված անձանց ընտանիքի անդամները, 5) այն կույրերը և խուլ-համրերը, վորոնց կուրությունը և խուլ ու համր լինելը չի կապված զինվորական ծառայության կամ վարձու աշխատանքի հետ, յեթե նրանք անդամ են Կույրերի Հայաստանյան Ընկերության կամ խուլ ու համրերի Հայաստանյան Միության։

8. Արտելի աշխատանքներին անձնական աշխատանքով մասնակցել պարտադիր է արտելի անդամների համար։

9. Արտելի անդամների թիվը չպետք է լինի 5-ից պակաս։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Անհրաժեշտ դեպքում Սոցապժողկոմատի կամ Հաշկոոպմիության հատուկ թույլտվությամբ արտելի անդամների թիվը կարելի յե իջեցնել, բայց 3-ից վոչ պակաս։

10. Հրահանգչական աշխատանքները, ինչպես նաև այն աշխատանքները կատարելու համար, վորոնք հաշմանդամների ֆիզիքական պակասությունների պատճառով նրանց ուժերից վեր են, կամ մասնագիտական պատրաստություն պահանջող աշխատանքների համար, արտելի անդամ կարող են ընդունվել այս կանոնադրության 7-րդ հոդվածում չհիշված անձինք, այն պայմանով, վորպեսզի նրանց քանակը ավելի չլինի արտելի հաշմանդամների ընդհանուր թվի 1/4-ից, և յեթե նրանք աշխատավոր տարրեր են։

11. Վարձու աշխատանքը թույլատրվում է ժամանակավոր կամ կոորավարձով աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև մասնագիտություն պահանջող կամ հաշմանդամների ֆիզիքական կարողությունից վեր աշխատանքների համար։ Նման դեպքերում վարձու աշխատանք կատարողների թիվը չպետք է լինի արտելում աշխատող արտելի անդամ-հաշմանդամների և վոչ հաշմանդամների ընդհանուր թվի 1/4 ից ավելի։

12. Արտելի կազմի մեջ մտնելը, ինչպես և նրա կազմից հեռանալը կամավոր է։ Արտելի անդամների ընդունելությունը կատարում է վարչությունը։ Արտելին անդամ լինել ցանկացող անձինք իրենց դիմումները համապատասխան փաստաթղթերի հետ ներկայացնում են վարչությանը, մերժման դեպքում գանգատները տրվում են արտելի ընդհանուր ժողովին։ Միաժամանակ յերկու արտելի անդամ լինել չի թույլատրվում։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Վոչ հաշմանդամին արտելի անդամ ընդունել թույլ է տրվում արտելի ընդհանուր ժողովի և հաշմանդամային արտելի այն վերադաս միության հետագա հաստատմամբ, վորի անդամ է արտելը։

Յեթե վոչ հաշմանդամին արտելի անդամ ընդունելու մասին ընդհանուր ժողովի կայացրած վորոշման արձանագրության պատճենը ստանալուց հետո յերկու շաբաթվա ընթացքում վորոշումը փոփոխության չենթարկվի միության կողմից, ապա համարվում է հաստատված։



13. Արտելի անդամ չեն կարող ընդունվել դատարանով արտավորված անձինք։

14. Արտելի անդամ դառնալիս յուրաքանչյուր անդամ պետք է մուծի փայավճար և մուտքի վճար և տա արտելին պարտավորություն այն մասին, վոր վերցնում է իր վրա արտելի գործերի վերաբերմամբ այս կանոնադրությամբ (հոդ. 18). նախատեսված պատասխանատվությունը։

15. Արտելի յուրաքանչյուր անդամի մուտքի վճարը հավասար է ............ռուբլու և յենթակա չէ վերադարձման յուրաքանչյուր անդամի պարտադիր փայավճար գումարը հավասար է ............ռուբլու։ Արտելի յուրաքանչյուր անդամ մեկ փայից ավելի ունենալ չի կարող, արտելի անդամի կողմից իր փայը այլ անձի հանձնելն արգելվում է։

16. Արտելի անդամը իր փայը կարող է մուծել մաս-մաս, պարբերական մուծանքներով, վորի չափը և մուծման ժամանակամիջոցը վորոշում է ընդհանուր ժողովը։

17. Արտելի անդամները պատասխանատու յեն այն բոլոր պարտավորությունների համար, վորոնք առաջացել են արտելի անդամ դառնալուց առաջ և թե դրանից հետո։

18. Արտելի յուրաքանչյուր անդամ մյուս բոլոր անդամների հետ միասին արտելի պարտավորությունների համար պատասխանատու յե իր անձնական գույքով։ Այդ պատասխանատվությունը սահմանվում է այս կանոնադրության 15-րդ հոդվածով վորոշված պարտադիր փայավճարի գումարի.............................պատիկ չափով։

19. Արտելի անդամների անձնական պարտքերի դիմաց և վոչ մի գանձում չպետք է կատարվի նրանց մուծած և արտելի տրամադրության տակ անցած փայավճարների և մուտքի վճարների հաշվին։ Աշխատավարձից գանձումները կատարվում են համապատասխան օրենքներով սահմանված չափերով։

Ընտանիքի անդամների ապրուստի համար վորոշված գումարները գանձվում են համաձայն գործող օրենքների։

20. Արտելի այն անդամները, վորոնք առանց հարգելի պատճառների չեն կատարի իրենց պարտականությունները, կամ կգործեն ի վնաս արտելի և առհասարակ արտելի կանոնադրությանը և նրա օրինական պահանջներին հակառակ կվարվեն, կարող են հեռացվել արտելի ընդհանուր ժողովի վորոշմամբ, վորը ի կատար է ածվում անմիջապես։

21. Արտելի կազմից կամավոր կերպով հեռանալ ցանկացող անդամը գրավոր կերպով հայտնում է այդ մասին արտելի վարչությանը։

22. Հեռացված անդամների հեռացումը հաշվում է այդ մասին կայացրած վորոշման օրից։

23. Արտելից հեռացած կամ հեռացված անդամները արտելի մյուս անդամների հետ հավասարապես պատասխանատու չեն արտելի պարտավորությունների և վնասների հանդեպ մինչև գործառնական տարվա վերջը։

24. Այս կանոնադրությամբ նախատեսնված վորևե պատճառով արտելից դուրս յեկած կամ հեռացված անդամը կամ նրա իրավահաջորդը յետ է ստանում իր փայավճարը, իրեն բաժին ընկած պարտքերը վճարե-



լուց հետո մնացած գումարի չափով, հաշվետվությունը հաստատելուց հետո յերկու շաբաթվա ընթացքում։ Աշխատավարձը հաշվում է մինչև դուրս գալու կամ հեռացվելու օրը—արտելի մյուս անդամների աշխատավարձին հավասար չափով։ Արտելի այլ դրամագլուխներից կամ այլ գույքից, արտելից հեռացված անդամը, կամ նրա իրավահաջորդը վոչինչ չի ստանում բացի հատուկ դրամագլխի օգտին վճարված գումարներից, յեթե նրանք յենթակա չեն վերադարձման՝ համաձայն այդ դրամագլուխների վերաբերյալ կանոնադրության։

Արտելում մասնակցելու իրավունքները ուրիշին հանձնելը կամ այդ իրավունքները ժառանգելը չի թույլատրվում։

### 3. ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

25. Արտելի միջոցները կազմում են՝ ա) այդ կազմակերպություններին ի սեփականություն անցած գույքերը, բ) փայավճարների և մուտքի վճարների գումարները, գ) վաստակներից գոյացած գումարները և այլ յեկամուտները, վորոնցից կազմվում են ա) հիմնական, բ) փայավճարների, գ) հատուկ և դ) շրջանառության դրամագլուխներ։

26, Հիմնական դրամագլուխը կազմվում է.— ա) արտելի սեփականություն. դարձած օժանդակ գործիքներից, բ) մուտքի վճարներից, գ) արտելի զուտ վաստակից առնվազն $20^0/_0$-ի չափով կատարվող տարեկան հատկացումներից, դ) նվիրատվություններից, ե) անվերադարձ փոխատվություններից, զ) արտելի ընդհանուր ժողովի վորոշմամբ հատկացվող պատահական այլ յեկամուտներից։

Հիմնական դրամագլուխը հատկացվում է գույք և արտադրության ուժանդակ գործիքներ ձեռք բերելու համար։

ԾԱՆՈԹ.—Ընդհանուր ժողովի վորոշմամբ թույլ է տրվում հիմնական դրամագլխից փոխառություն կատարել շրջանառության կարիքների համար։

27. Փայադրամագլուխը կազմվում է անդամների փայավճարներից և հատկացվում է ընթացիկ գործառքների համար։

38. Շրջանառության դրամագլուխը կազմվում է զուտ վաստակից առնվազն $30^{0}/_{0}$-ի չափով կատարվող հատկացումներից և հատկացվում է արտելի ընթացիկ գործառքների համար։

29. Պահեստի դրամագլուխը կազմվում է զուտ վաստակից առնվազն $10^{0}/_{0}$-ի չափով կատարվող հատկացումներից և գործադրվում է վնասները հատուցանելու համար։ Պահեստի դրամագլխի օգտին կատարվող հատկացումները դադարեցվում են, յեթե այդ դրամագլուխը հավասարվում է հիմնական դրամագլխին։

30. Հատուկ դրամագլուխ կազմվում է.—ա) արտելի զուտ վաստակից առնվազն $10^{0}/_{0}$-ի չափով կատարվող հատկացումներից, բ) արտելի անդամների աշխատավարձի տոկոսային հատկացումներից, գ) ընդհանուր ժողովի կողմից վորոշված հատկացումներից ու այլ յեկամուտներից և հատկացվում է ընդհանուր ժողովի կողմից վորոշված նպատակների համար։

31. Ընդհանուր ժողովի կողմից հաշվետվությունը հաստատելուց հետո տարեկան զուտ վաստակը, այսինքն՝ բոլոր ծախսերը վճարելուց հետո մնացած



գումարը բաժանվում է հետևյալ ձևով.—ա) հիմնական դրամագլխին առնվազն $20^{0}/_{0}$, բ) պահեստի դրամագլխի առնվազն $10^{0}/_{0}$, գ) շրջանառության դրամագլխին առնվազն $30^{0}/_{0}$, դ) միության ֆոնդին առնվազն $10^{0}/_{0}$, և ե) հատուկ միջոցներին, համաձայն ընդհանուր ժողովի վորոշման, առնվազն $10^{0}/_{0}$։ Մնացած գումարը հատկացվում է արտելի անդամներին լրացուցիչ աշխատավարձ տալու կամ ընդհամուր ժողովի վորոշմամբ այլ նպատակների համար։

ԾԱՆՈԹ.--Արտելի անդամներին լրացուցիչ աշխատավարձ կարող է տրվել միայն այն դեպքում, յեթե նրանք վճարել են իրենց փայավճարներից և անդամավճարներից մնացած պարտքերը։

32. Տարեկան հաշվետվության ժամանակ պարզված վնասը ծածկվում է պահեստի դրամագլխի միջոցներով։ Վերջինը բավարար չլինելու դեպքում վնասը ծածկվում է ի հաշիվ շրջանառության, հիմնական և փայավճարների դրամագլուխների, վորոնք արտելի կողմից պարտադիր կերպով լրացվում և իրենց սկզբնական չափին են հասցվում հաշվետու տարվանը հաջորդող տարվա ընթացքում։

## 4. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

33. Արտելի գործերը կառավարում են.—ա) ընդհանուր ժողովը, բ) արտելը վարչությունը կամ նրա ավագը (յեթե արտելի անդամների թիվը 10 ից պակաս է), գ) խորհուրդը, յեթե արտելի ընդհանուր ժողովը վորոշել է խորհուրդ ունենալ։

ԾԱՆՈԹ.—Արտելի խորհուրդ կարող է ու-

նենալ այն դեպքում, յեթե նրա անդամների թիվը 50-ից պակաս չե:

## Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

34. Ընդհանուր ժողովները լինում են.—ա, հերթական, վորը հրավիրվում ե առնվազն 3 ամիսը մեկ անգամ, բ) արտակարգ, վորը հրավիրում ե վարչությունը (կամ ավագը) վերստուգիչ հանձնաժողովի (վերահսկիչի) կամ արտելի անդամների 1/3-ի կամ վերադաս միության պահանջով՝ վոչ ուշ քան այդ առթիվ գրավոր հայտարարություն ստանալու որից 7 որվա ընթացքում:

35. Ընդհանուր ժողովի իրավասության յենթակա յեն:

ա) արտելի վարչության անդամների (կամ ավագի) ընտրությունը, վերստուգիչ հանձնաժողովի (կամ վերահսկիչի) և նրանց փոխանդամների վերընտրությունը և պատշաճ դեպքերում՝ խորհրդի ընտրությունը:

բ) արտելի անդամների քանակական կազմի սահմանումը և նրա գործունեյության բնույթը՝ տեղական պայմանների հոմեմատ.

գ) վարչության, վերստուգիչ հանձնաժողովի (ավագի կամ վերահսկիչի) և խորհրդի համար տրվող հրահանգների հաստատումը·

դ) Վարչության անդամների, արտելի անդամների ու վարձու աշխատավորների աշխատավարձի չափի վորոշումը և ներքին կարգ ու կանոնի հաստատումը·

ե) Խորհրդի, վարչության և վերստուգիչ հանձնաժողովի դեմ տրված գանգատների քննությունը,



արտելի վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամներին պատասխանատվության յենթարկելը և նրանց ժամանակից շուտ իրենց պարտականությունների կատարումից հեռացնելը·

զ) Այդ կանոնադրության 12-րդ հոդվածի ծանոթությամբ մատնանշված դեպքերում կատարվող ընդունելությունը հաստատելը և արտելի առանձին անդամներին արձակելը·

ը) միության լիազորների ժողովներին մասնակցելու համար լիազորներ ընտրելը·

թ) արտելի հաշվետվությունների, նախահաշիվների և գործունեյության ծրագրերի քննությունն ու հաստատումը, յեկամտի բաշխումը և վնասները ծածկելու կարգի սահմանումը:

ժ) փայավճարների և մուտքի վճարների չափի վճարման կարգի վորոշումը·

ի) արտելի կանոնադրության լրացումը և փոփոխությունը, պահպանելով կանոնադրությունների հաստատման համար սահմանված կարգը·

լ) այլ հարցերի վորոշումը, վորոնք վեր են արտելխորհրդի, վարչության և վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունից

խ) արտելի լիկվիդացիայի յենթարկելու հարցը (հոդ. 61):

36. Ընդհանուր ժողով հրավիրելու որից առնվազն 3 որ առաջ վարչությունը ծանուցանում ե արտելի անդամներին և վերստուգիչ հանձնաժողովին ժողովի հրավիրման ժամանակի, տեղի և քննության յենթակա հարցերի մասին, ինչպես նաև՝ 38-րդ հոդվածով նախատեսված դեպքերում 2-րդ անգամ հրավիրելիք ժողովի մասին:

37. Ընդհանուր ժողովը համարվում է կայացած, յեթե ներկա յեղողների թիվը արտելի անդամների թվի կեսից պակաս չէ։ Արտելի լուծարքի, կանոնադրության փոփոխման ու լրացման, ինչպես և արտելի անդամների հեռացման վերաբերյալ հարցերը վորոշելու համար անհրաժեշտ է արտելի անդամների առնվազն 2/3-ի ներկայությունը։

38. Յեթե ընդհանուր ժողով նշանակված որը և ժամին ներկա չլինի արտելի անդամներից այնքան հոգի, վորը նախատեսված է 37-րդ հոդվածով, ապա հաջորդ որը ժողովը չկայացած հայտարարելուց հետո հրավիրվում է 2-րդ ժողով, վորը որինական է համարվում անկախ ներկա յեղողների թվից։ Յերկրորդ ժողովը վորոշում է միմիայն այն հարցերը, վորոնք դրված են յեղել չկայացած ժողովի որակարգում։

39. Ընդհանուր ժողովը յուրաքանչյուր նիստի համար ընտրում է իր միջից նախագահ և քարտուղար։ Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները իրենց գործունեության վերաբերյալ հարցերի քննության ժամանակ նախագահել չեն կարող։

40. Գործերը վճռվում են բաց քվեարկությամբ և ներկա յեղողների ձայների պարզ մեծամասնությամբ։ Արտելի անդամությունից հեռացնելու, կանոնադրության փոփոխման և արտելի լիկվիդացիայի հարցերը վորոշելու համար պահանջվում է ձայների 2/3-ի մասը։ Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, վորը ուրիշին հանձնել չի թույլատրվում։ Ձայների հավասար լինելու դեպքում հարցը համարվում է չվորոշված և փոխադրվում է հաջորդ նիստը ի քննություն։



41. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները ժողովներին մասնակցում են արտելի մյուս անդամների հետ հավասար իրավունքներով, բայց առանց վճռողական ձայնի իրավունքի, այն դեպքերում, յերբ քննվում են ա) նրանց կողմից կազմըված և ստուգված հաշվետվությունը հաստատելու, նրանց գործունեության գնահատական տալու, բ) նրանց վարձատրություն տալու, գ) նրանց դատական պատասխանատվության յենթարկելու հարցերը։

42 Ընդհանուր ժողովում կազմվում են արձանագրություններ, վորոնք մուծվում են առանձին գրքի մեջ և ստորագրվում են ժողովի նախագահի ու քարտուղարի կողմից։ Արձանագրության պատճենը ներկայացվում է միությանը վոչ ուշ քան ժողովը վերջանալուց հետո 3 որվա ընթացքում։

43. Արտելի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի իր առանձին կարծիքը հայտնելու այս կամ այն հարցի վերաբերմամբ և պահանջելու մտցնել այդ կարծիքը արձանագրության մեջ։

## Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ.

44. Վարչությունը, իսկ անհրաժեշտության դեպքում արտելի ավագը, արտելի գործադիր մարմինն է և հանդիսանում է նրա ներկայացուցիչը նրա բոլոր գործերում առանց հատուկ փոխանորդագրի։

45. Վարչության (ավագի) պարտականությունն է.—

ա) վարել արտելի գործերը, համաձայն արտելի կանոնադրության և ընդհանուր ժողովների վորոշումների ճիշտ հիմունքներով.

37. Ընդհանուր ժողովը համարվում է կայացած, յեթե ներկա յեղողների թիվը արտելի անդամների թվի կեսից պակաս չէ։ Արտելի լուծարքի, կանոնադրության փոփոխման ու լրացման, ինչպես և արտելի անդամների հեռացման վերաբերյալ հարցերը վորոշելու համար անհրաժեշտ է արտելի անդամների առնվազն 2/3-ի ներկայությունը։

38. Յեթե ընդհանուր ժողով նշանակված օրը և ժամին ներկա չլինի արտելի անդամներից այնքան հոգի, վորը նախատեսված է 37-րդ հոդվածով, ապա հաջորդ օրը ժողովը չկայացած հայտարարելուց հետո հրավիրվում է 2-րդ ժողով, վորը օրինական է համարվում անկախ ներկա յեղողների թվից։ Յերկրորդ ժողովը վորոշում է միմիայն այն հարցերը, վորոնք դրված են յեղել չկայացած ժողովի օրակարգում։

39. Ընդհանուր ժողովը յուրաքանչյուր նիստի համար ընտրում է իր միջից նախագահ և քարտուղար։ Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները իրենց գործունեյության վերաբերյալ հարցերի քննության ժամանակ նախագահել չեն կարող։

40. Գործերը վճռվում են բաց քվեարկությամբ և ներկա յեղողների ձայների պարզ մեծամասնությամբ։ Արտելի անդամությունից հեռացնելու, կանոնադրության փոփոխման և արտելի լիկվիդացիայի հարցերը վորոշելու համար պահանջվում է ձայների 2/3-ի մասը։ Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, վորը ուրիշին հանձնել չի թույլատրվում։ Ձայների հավասար լինելու դեպքում հարցը համարվում է չվորոշված և փոխադրվում է հաջորդ նիստը ի քննություն։



41. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները ժողովներին մասնակցում են արտելի մյուս անդամների հետ հավասար իրավունքներով, բայց առանց վճռողական ձայնի իրավունքի, այն դեպքերում, յերբ քննվում են ա) նրանց կողմից կազմըված և ստուգված հաշվետվությունը հաստատելու, նրանց գործունեյության գնահատական տալու, բ) նրանց վարձատրություն տալու, գ) նրանց դատական պատասխանատվության յենթարկելու հարցերը։

42 Ընդհանուր ժողովում կազմվում են արձանագրություններ, վորոնք մուծվում են առանձին գըրքի մեջ և ստորագրվում են ժողովի նախագահի ու քարտուղարի կողմից։ Արձանագրության պատճենը ներկայացվում է միությանը վոչ ուշ քան ժողովը վերջանալուց հետո 3 օրվա ընթացքում։

43. Արտելի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի իր առանձին կարծիքը հայտնելու այս կամ այն հարցի վերաբերմամբ և պահանջելու մտցնել այդ կարծիքը արձանագրության մեջ։

## Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ.

44. Վարչությունը, իսկ անհրաժեշտության դեպքում արտելի ավագը, արտելի գործադիր մարմինն է և հանդիսանում է նրա ներկայացուցիչը նրա բոլոր գործերում առանց հատուկ փոխանորդագրի։

45. Վարչության (ավագի) պարտականությունն է.—

ա) վարել արտելի գործերը, համաձայն արտելի կանոնադրության և ընդհանուր ժողովների վորոշումների ճիշտ հիմունքներով.

բ) կազմել գործունեության ծրագիր, յեկամտի և ծախսերի նախահաշիվ, ինչպես և յեկամուտը բաշխելու և ֆոնդերը ծածկելու նախագիծ և վերստուգիչ հանձնաժողովի (կամ վերահսկիչի) յեզրակացության հետ միասին ներկայացնել արտելի ընդհանուր ժողովին ի հաստատություն.

գ) կազմել արտելի գործունեության բոլոր ճյուղերի վերաբերյալ կանոններ և ներկայացնել արտելի ընդհանուր ժողովին ի հաստատություն.

դ) Հսկել, վորպեսզի արտելի անդամները աշխատանքները կանոնավոր կատարեն և նրանց վերաբերմամբ կիրարկվեն ընդհանուր ժողովի կողմից սահմանված միջոցները.

ե) պաշտպանել արտելի շահերը դատական և վարչական հիմնարկություններում.

զ) վարել հաշվապահությունը և գործավարությունը, ներկայացնել հաշվետվությունն և արտելի գործերով հարաբերություն պահպանել կազմակերպությունների և անձանց հետ։

ը) ստանալ գումարներ և արժեքներ, պահել և վճարել դրամներ և արժեքներ, տալ, ընդունել վճարում և զեղչել մուրհակներ ու այլ պարտավորություններ։

թ) կնքել կապալների, մատակարարումների, գնումների, վաճառման, վարձակալության և այլ պայմանագրեր ու գործարքներ ընդհանուր ժողովի վորոշած սահմաններում, ինչպես նաև տալ փոխանորդագրեր։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Պարտավորություններ, վորոնց թվում մուրհակներ տալը, վարկային ու



այլ հիմնարկություններից, ինչպես նաև ընթացիկ հաշվով դրամական գումարներ ստանալը կատարվում է պահանջագրերով, վորը ստորագրում են արտելի նախագահը կամ նրա փոխանորդը և վարչության մեկ անդամը իսկ անհրաժեշտ դեպքում՝ արտելի ավագը և արտելի ընդհանուր ժողովի կողմից նշանակված՝ արտելի անդամներից մեկը։

խ) Վարել արտելի ընթացիկ գործերը։

46. Արտելի վարչությունը կազմվում է առնվազն 3 անդամից և յերկու փոխանդամից, վորոնք ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից մեկ տարի ժամանակով։ Վարչության անդամները իրենց միջից ընտրում են նախագահ, փոխ-նախագահ և բաշխում են իրենց միջև արտելի գործերը վարելու պարտականությունները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն արտելներում, վորոնց անդամների թիվը 10-ից պակաս է, վարչության փոխարեն ընդհանուր ժողովի կողմից ընտրվում է արտելի ավագ և նրա մեկ անձնափոխանորդ։

47. Վարչությունը հրավիրվում է հարկ յեղած դեպքում, բայց վոչ պակաս քան 2 շաբաթը մեկ անգամ։ Նիստի որվա և քննության առնվելիք հարցերի մասին արտելի շենքում փակցվում է հայտարարություն։ Հարցերը վորոշվում են ձայների պարզ մեծամասնությամբ։

48. Վարչության վորոշումները մտցվում են արձանագրությունների հատուկ գրքի մեջ և ստորա-

գրվում են վարչության ներկա չեղած բոլոր անդամների կողմից։

49. Վարչության այն անդամը, որը համաձայն չի լինի մեծամասնության որոշմանը, այդ մասին իր հատուկ կարծիքը մտցնում է արձանագրության մեջ, և պատասխանատու չէ ընդունված որոշման պատճառով առաջացած հետևանքների համար։

50 Արտելի անդամները իրենց պարտավորությունները խախտելու դեպքում պատասխանատու յեն իրենց ամբողջ գույքով բոլոր այն վնասների համար, որ կրել է արտելը նրանց պատճառով.

## 5. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

51. Արտելի գործերը ստուգելու համար ընդհանուր ժողովը մեկ տարի ժամանակով արտելի անդամներից ընտրում է վերստուգիչ հանձնաժողով, բաղկացած 3 անդամից և յերկու փոխ-անդամից, վորոնք վարչության կազմին չեն պատկանում։ Վերստուգիչ հանձնաժողովը իր միջից ընտրում է նախագահ և քարտուղար։ 10-ից պակաս անդամ ունեցող արտելներում վերստուգիչ հանձնաժողովի փոխարեն ընդհանուր ժողովի կողմից ընտրվում է վերահսկիչ և նրա մեկ անձնափոխանորդ։

**Ծանոթություն**.— Վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել արտելի այն անդամները, վորոնք արտելում վարում են տնտեսական կամ հաշվական պատասխանատու պաշտոններ և այն անձինք, վորոնք վարչության անդամների հետ կապված են ազգական կամ խնամիական կապերով՝ մինչև ազգակցության 2-րդ աստիճանը ներառյալ։

52 Վերստուգիչ հանձնաժողովի պարտականություններն են.—

ա) Վոչ պակաս քան վեց ամիսը մեկ անգամ կատարել արտելի գործունեյության մանրամասն ստուգում, ինչպես և արտելի գույքի, դրամարկղի, ապրանքների և փաստաթղթերի պարբերական ստուգումներ.

բ) Ներկայացնել ընդհանուր ժողովին իր գործունեյության մասին հաշվեզեկույցներ, կատարած ստուգումների, տարեկան հաշվետվության և հաշվեկշռի, ինչպես նաև արտելի յեկամուտների բաշխման կամ վնասների փակման նախագծի վերաբերյալ յեզրակացություններ.

գ) Քննության յենթարկել վարչության դեմ իրեն տրված գանգատները և իր յեզրակացությամբ ներկայացնել արտելի ընդհանուր ժողովին ի քննություն.

դ) Կատարել այլ գործողություններ, վորոնք նախատեսնված են վերադաս միության առանձին հրահանգներով։

53. Վերստուգիչ հանձնաժողովը գումարվում է հարկ յեղած դեպքում, բայց վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ։ Իր բոլոր գործողությունների մասին վերստուգիչ հանձնաժողովը հիշատակում է արձանագրության գրքերում։

54. Վերստուգիչ հանձնաժողովը իր գործունեության համար համապարտ պատասխանատվություն է կրում իր անդամների անձնական գույքով։

գրվում են վարչության ներկա չեղած բոլոր անդամների կողմից։

49. Վարչության այն անդամը, վորը համաձայն չի լինի մեծամասնության վորոշմանը, այդ մասին իր հատուկ կարծիքը մտցնում ե արձանագրության մեջ, և պատասխանատու չե ընդունված վորոշման պատճառով առաջացած հետևանքների համար։

50 Արտելի անդամները իրենց պարտավորությունները խախտելու դեպքում պատասխանատու յեն իրենց ամբողջ գույքով բոլոր այն վնասների համար, վոր կրել ե արտելը նրանց պատճառով.

## 5. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

51. Արտելի գործերը ստուգելու համար ընդհանուր ժողովը մեկ տարի ժամանակով արտելի անդամներից ընտրում ե վերստուգիչ հանձնաժողով, բաղկացած 3 անդամից և յերկու փոխ-անդամից, վորոնք վարչության կազմին չեն պատկանում։ Վերստուգիչ հանձնաժողովը իր միջից ընտրում ե նախագահ և քարտուղար։ 10-ից պակաս անդամ ունեցող արտելներում վերստուգիչ հանձնաժողովի փոխարեն ընդհանուր ժողովի կողմից ընտրվում ե վերահսկիչ և նրա մեկ անձնափոխանորդ։

**Ծանոթություն**.— Վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել արտելի այն անդամները, վորոնք արտելում վարում են տնտեսական կամ հաշվական պատասխանատու պաշտոններ և այն անձինք, վորոնք վարչության անդամների հետ կապված են ազգակցա-



կան կամ խնամիական կապերով՝ մինչև ազգակցության 2-րդ աստիճանը ներառյալ։

52 Վերստուգիչ հանձնաժողովի պարտականություններն են.—

ա) Վոչ պակաս քան վեց ամիսը մեկ անգամ կատարել արտելի գործունեության մանրամասն ստուգում, ինչպես և արտելի գույքի, դրամարկղի, ապրանքների և փաստաթղթերի պարբերական ստուգումներ.

բ) Ներկայացնել ընդհանուր ժողովին իր գործունեության մասին հաշվեզեկույցներ, կատարած ստուգումների, տարեկան հաշվետվության և հաշվեկշռի, ինչպես նաև արտելի յեկամուտների բաշխման կամ վնասների փակման նախագծի վերաբերյալ յեզրակացություններ.

գ) Քննության յենթարկել վարչության դեմ իրեն տրված գանգատները և իր յեզրակացությամբ ներկայացնել արտելի ընդհանուր ժողովին ի քննություն.

դ) Կատարել այլ գործողություններ, վորոնք նախատեսնված են վերադաս միության առանձին հրահանգներով։

53. Վերստուգիչ հանձնաժողովը գումարվում ե հարկ յեղած դեպքում, բայց վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ։ Իր բոլոր գործողությունների մասին վերստուգիչ հանձնաժողովը հիշատակում ե արձանագրության գրքերում։

54. Վերստուգիչ հանձնաժողովը իր գանցառությունների համար համապարտ պատասխանատվություն ե կրում իր անդամների անձնական գույքով։

55. Վարչության դեմ տրված գանգատների, ինչպես և դրամարկղի հաշվետվության և այլ նյութերի ստուգման հետևանքով պարզված հանգամանքների առթիվ, վերստուգիչ հանձնաժողովը ցուցմունքներ է անում վարչությանը արտելի շահերին և միության հրահանգներին անհամապատասխան և սխալ գործունեության համար։ Զարարկություններ հայտնաբերելու դեպքում վերստուգիչ հանձնաժողովը հրավիրում է արտելի անդամների ընդհանուր ժողով, համաձայն 34-րդ հոդվածի։ Յեթե վարչությունը 34-րդ հոդվածով սահմանված ժամանակամիջոցում արտակարգ ժողով չի հրավիրի, վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի ինքնուրույն կերպով ժողով հրավիրելու։

56. Վերստուգիչ հանձնաժողովի դեմ գանգատները տրվում են ընդհանուր ժողովին, բայց միայն հանձնաժողովի միջոցով, վորը պարտավոր է գանգատները ներկայացնելու առաջիկա ժողովին, իր բացատրություններով հանդերձ։

## 6. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

57. Արտելի գործունեությունն անպայման կատարվում է մատյաններով, համաձայն Հաշմանդամային Կոոպերատիվ Վերագաս Միության ցուցմունքների և հրահանգների։

58. Արտելի գործառնական տարին հաշվում է հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը։ Գործառնական առաջին տարին հաշվում է արտելի բացման որից մինչև նույն տարվա սեպտեմբերի 30-ը։

59. Յուրաքանչյուր անցած տարվա վարչու-



թյունը կազմում է արտելի գործառնությունների վերաբերյալ հաշվետվություն, յեկամտի բաշխման և ֆոնդերի ծախսման նախագիծ, ինչպես նաև մյուս տարվա գործունեության նախահաշիվ ու ծրագիր։ Հաշվետվությունը, հաշվեկշիռը, յեկամտի բաշխման և ֆոնդերի ծախսման նախագիծը, նախահաշիվը և գործունեության ծրագիրը վերստուգիչ հանձնաժողովի կողմից ստուգվելուց հետո և նրա յեզրակացության հետ միասին ներկայացվում են ընդհանուր ժողովին ի քննություն և ի հաստատություն վոչ ուշ քան մինչև գործառնական տարին լրանալը։

## 7. ԱՐՏԵԼԻ Լ Ո Ւ Ծ Ա Ր Ք Ը

60. Արտելը լուծարքի յե յենթարկվում այն հիմունքներով, վորոնք նախատեսված են ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. հունիսի 15-ին հաստատած՝ «Կոոպերատիվ կազմակերպությունների» լիկվիդացիայի, միացման ու բաժանման դեպքում նրանց դադարման կարգի մասին, կանոնադրությամբ, այն է՝

ա) Արտելի ընդհանուր ժողովի վորոշմամբ.

բ) Արտելի անդամների թիվը այս կանոնադրությամբ վորոշված թվից պակասելու հետևանքով, յեթե անդամների թիվը յերկու ամսվա ընթացքում չլացվի.

գ) Յեթե արտելը իր տոմարագրման որից յերեք ամսվա ընթացքում չսկսի իր գործունեությունը։

դ) Դատարանի վորոշմամբ արտելը սնանկ համարվելու դեպքում.

*ե) Ուրիշ արտելի հետ միանալու կամ բաժանվելու դեպքում.*

*զ) Վերադաս միության վորոշմամբ, վորը համաձայնեցված պետք է լինի սոցիալական ապահովության համապատասխան մարմնի հետ.*

*է) Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատի վորոշմամբ արտելի կանոնադրությունը, որենքը, սրա կիրարկության համար հրատարակված հրահանգները, ինչպես նաև միության որինական պահանջները չկիրառելու դեպքում։*

*61. Արտելի լուծարքի հարցը քննության առնելու հիմք հանդիսացող հանգամանքներ լինելու դեպքում, վարչութունը պարտավոր է այդ մասին հայտնելու միությանը և վերջինից ցուցմունքներ ստանալուց հետո, կամ հայտարարությունը ուղարկելու որից 14 որվա ընթացքում պատասխան չստանալու դեպքում հրավիրելու ընդհանուր ժողով, վորը սահմանվում է արտելի լուծարքի կարգը, կամ միջոցներ է ձեռք առնում վերացնելու այն պատճառները, վորոնք գրդում են արտելը լուծարքի յենթարկելու։*

*62. 60-րդ հոդվածի հիման վրա արտելը լուծարքի յենթարկելու դեպքում, լուծարքը կատարում է վարչությունը, յեթե ընդհանուր ժողովը այդ չի հանձնարարի առնվազն 3 հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողովի։ Լիկվիդացիայի վերաբերյալ ընդհանուր ժողովի վորոշումը հրատարակվում է տեղական թերթերից վորևէ մեկում։*

*63. Լուծարքը կատարող անձինք յենթարկվում են վարչության անդամների համար սահմանված ընդհանուր կանոններին և արտելին վորևէ վնաս հասցնելու դեպքում նույն հիմունքներով յենթարկվում են պատասխանատվության, ինչպես նաև յենթակա յեն վերստուգիչ հանձնաժողովի վերահսկողությանը։*



*64. Լուծարք կատարող հանձնաժողովը ծանուցագրերի և հայտարարությունների միջոցով կանչում է արտելի պարտատերերին, միջոցներ է ձեռք առնում բավարարելու նրանց պահանջները, վաճառքի յե հանում արտելի գույքը, համաձայնություն և հաշտարար գործարքներ է կնքում 3-րդ անձանց հետ։*

*65 Արտելի պարտքերը վճարելիս ՀՍԽՀ Քաղաքացիական Որենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսնված պահանջանքները բավարարելուց հետո առաջին հերթին հատուցվում են հաշմանդամային արտելի վերադաս Միության և հաշմակոոպմիության տված փոխատվությունները։*

*66. Յեթե արտելի գույքը չի բավականացնում բավարարելու նրա բոլոր պարտավորությունները, լուծարք կատարող անձինք մնացած գումարը գանձում են արտելի անդամներից, համաձայն այս կանոնադրության 18-րդ հոդվածի։*

*67. Իր ստանձած պարտավորություններից բղխող բոլոր պահանջները բավարարելուց և փայավճարները վերադարձնելուց հետո արտելի գույքը և դրամագլուխները, համաձայն արտելի ընդհանուր ժողովի կողմից այդ մասին կայացրած վորոշման հատկացվում են կոոպերատիվ և հանրոգուտ նպատակներին, միաժամանակ տալով արտելի յուրաքանչյուր անդամի՝ նրա պարտադիր փայավճարի յեռապատիկ չափից վոչ ավելի գումարը։ Ընդհանուր ժողովի արձանագրությունները 3 որվա ընթացքում պետք է*

ներկայացվի միության հաստատելու հա[illegible]ր, և յեթե միությունը՝ մեկ շաբաթվա ընթա[illegible] չվավերացնի արձանագրությունը, ապա այն համարվում ե իր ուժի մեջ մտած։

68. Լուծարքի աշխատանքները ավարտելուց հետո լիկվիդացիոն հանձնաժողովը իր գործողությունների մասին կազմում ե հաշվեզեկույց, վոր ներկայացնում ե գերադաս միության ի հաստատություն։ Մատյանները, գործերը և արտելի բոլոր փաստաթղթերը հանձնվում են սոցիալական ապահովության այն մարմնին, վորը առմարագրել ե արտելը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0209414

28.089/1.